


## ԺԹ

## ԼԵՒՈՆԻ ՇԻՐԻՄՆ ԵՒ ԱՆՈՐ ԱՐՈՒԻՂՐ



ԼԵՒՈՆԻ մարմինը Կեղեասինեանց վանքը փոխադրուելէ ետքը՝ նոյն հանդիսաւորութիւնով ամփոփուեցաւ վանքին Ս. Աստուածածնի եկեղեցին բեմին որմախորշերէն մէկին մէջ, աւագ խորանին ձախակողմը, ուր սովորութիւն է կարգալ Աւետարանը: Այս որմախորշին ձախատը ներկով գրուեցաւ .

Ci gist lyon. roy darmenie. priez dieu pour luy.

այսինքն՝ « Աստ հանգչի ԼԵՒՈՆ, Թագաւոր Հայաստանի Աղօթեցէք առ Աստուած վանն նորա(1):» Բայց ԺԹ-ը դարուն այս գրութիւնը ջնջելով՝ տեղը դրին հ. Ստեփաննոս Կառնօի խմբագրած հետեւեալ լատիներէն արձանագրութիւնը, մարմարինէ տախտակի մը վրայ քանդակուած(2) ինչպէս կը տեսնուի գրքիս սկիզբը գրուած գունաւոր պատկերին մէջ, ԼԵՒՈՆԻ արձանին վերեւ.

Leo Lvsignane ? Armenorv ? rex novis :  
sim ? ab Otomanis solio detvrbatvs  
et a Carolo. VI. Franc. rege beni :  
gnissime except ? ipsi ? svptib ? hoc  
in loco regaliter sepvlt ? fvlt. an. D. 1393

այսինքն՝

« ԼԵՒՈՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ, վերջին քաղաւոր Հայոց,  
Օսմանցիներէ զահրնկեց եղած  
եւ Կարոլոս Զ Ֆրանսացոց քաղաւորէն  
Բարեսէր մարդասիրութեամբ հիւ ըրնկալուած,  
Նորին ծախիւք արխայօրէն քաղուեցաւ աստ, յամի Տեառն 1393 »:

Իսկ բուն տապանաքարին վրայի արձանագրութիւնն է, կափարչին եզերքը չըջանակի գրուած, հետեւեալը. — cy gist tres noble et | excellet prince.

(1) Du Cange, *Les Familles d'Outre-mer*, Խ. 153 :

(2) Piganiol de la Force, *Description historique de la ville de Paris*, Խ. Գ, Խ. 189 :